679

1. Թանկագին որպեներ է Աստված պարգևել.
Տեսնում ենք մեր քույր-եղբայրներին,
Եվ Հիսուսը մեզ հետ լինել է խոստացել,
Տանք մեր սրտերում տեղ Փրկչին:

2. Ի՜նչ հաճելի է ձեզ հետ Նրան խոնարհվել,
Աշխարհի հուզմունքներն մոռանալ,
Եվ ի՜նչ ուրախություն է Սուրբ Հոգով լցվել,
Երկինքն այս ժամին վայելել:

3. Մենք՝ Սիոնի ճամփորդներս ենք այստեղ հանգչում՝
Կենաց ջուր բխող աղբյուրի մոտ:
Թաբոր լեռն անցնելով՝ նոր ուժով կշարժվենք
Տիրոջ նեղ ճամփով քարքարոտ:

4. Քաղցր հանդիպման մեջ անտեսում ենք ահը
Եվ հսկա ժայռերը մեր ճամփի,
Զորացնում են մեզ մեր Աստծո խոսքերը,
Տանում վեր՝ դեպ նոր բարձունքի:

5. Տեր Հիսուսին հիմա ավելի մոտենանք,
Միշտ նայենք մեր կենդանի Վեմին,
Հավատքի վահանով և սիրո զրահով
Հետևենք Տիրոջ քայլերին:

Պատրաստված է Հոգևոր Արխիվի Կողմից | hogevorarchive.com | ergaran.com | 2025